գրդած ու գգուած ժամագիրքը իւր նախկին անփառունակ վիճակից վերանար ի գերագոյն վիճակ. ահա այս.—իրրև թանկագին պերճանք սիրող մի դշխոյ, շքեղապարդել պաճուճել նորա գծուծ և լերկ պատկերը, և թափել նորա վերայ առատապէս ամենայն ստուածային գեղ և վայելչութիւն, որպէս զի ժամագրքիս պայծառ տեսութիւնից ամենոք ընդարմանայ, զգածուի, շլանայ, զմայլի, և առանց տեղի և մտքի խլրտման կամ շարժման, միշտ առ Աստուած ձգուած պահէ Նրանով իւր կատարելիք անհատ աղօթքն ու բարեբանութիւնը։

Եւ արդարև որպէս Սահակ և Մեսրոպ, այսպէս և երկու մեծ Հայրերիս այս երկնաւոր փափագանաց՝ ցանկութեամբ, մտքով և սրտով կամակից մեր եկեղեցւոյ շատ հայեր, տուին ժամագրքիս իւր վայելչութիւնը, տուին ժամագրքիս իւր պայծառութիւնը, փչեցին Նորա երեսին շունչ կենդանի, տեղալով առատապէս այդ պչրանք սիրող Թագուհու գլխին իրենց թանկագին մարգարիտներն ու զարդերը,—իրենց խնկելի Աղօթքներն ու Քարոզները, որոց մեծագին լինել ցոյց տալն այստեղ, իմ գրչից դուրս է։

Սահակ Վարդապետ Ամատունի

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Նորին ս. Օծութեան աղգիս Վեհափառ Հայրապետի ի Մայր Աթոռս գանուելու պատճառաւ Նոր տարուայ, Ծննդեան և Յովհաննու Մկրտչի Ծննդեան տօնները սովորականէն աւելի շքեղութեամբ կատարուեցան։

Յունուար 1-ի առաւօտ ժամերգութենէն զկնի ըստ սո-

վորականին ժամը 8 1/2 ին Մայր Տաճարից արուեց աղդարար զանգը և բոլոր միաբանութիւնը՝ արքեպիսկոպոս, եպիսկոպոս, վարդապետ և սարկաւագ իրենց փիլոններով և ուրարներով փութացին ի Վեհարան ի շնորհաւորութիւն Նոր տարւոյ իրենց սիրեցեալ Հոգևոր Պետին։ Նորին Սրբութիւնը տկարութիւնից դեռ բոլորովին չկազդուրած շատ քիչ խօսեց, մաղթելով իւր միաբան հարց և եղբարց երկար տարիներ, արդիւնաւոր գործունէութիւն, սէր և համերաշխութիւն. աղօթեց իւր բազմատանջ ազգի և եկեղեցւոյ համար որ Աստուած ինչպէս ցարդ հաստատուն և յարատև պահեր է Հայոց ազգը և Մայր Աթոռը, դարձեալ պահէ մինչ ի կատարած աշխարհի։ Միաբանից համար ասաց թէ՝ «Մայր Աթոռ հաստատուն պահողներ միաբաններն են. նիւթը կայ և կը մնայ. իսկ բարոյական հաստատութիւն, էջմիածնի նշանակութիւն բարձրացնողն էլ նորա միաբանութիւնն է. Ես արդէն դէպի արևմուտք կերթամ՝ կը նայիմ ետևս կը տեսնեմ որ ութսուն երկու բլուրներ անցեր եմ՝ շուտով այս բլուրն էլ կանցնիմ. միևնոյն է ձեզ համար. աշխատեցէք ի զուր չանցընել այդ բլուրներ»։

Ապա մօտեցան միաբանք ըստ աւագութեան և վերաբներ հանած համբուրեցին Հոգևոր Տիրոջ աջը և ստացան մի մի օրացոյց։ Միաբանութիւնից վերջ ներկայացան Հոգևոր ձեմարանի սաներ տեսչի և վարդապետ ուսուցիչների ուղեկցութեամբ, որոնց Վեհափառ Հայրապետը բարեհաճեց աջ տալ, ասելով որ տկար է և ոյժ չունի խօսելու՝ այլ կը թողու ուրիշ պատեհ առթիւ։ Աշակերտներից յետոյ ներկայացան Վաղարշապատի քահանաներ, գիւղի տանուտէրը և իշխաններ, որոնց շնորհաւորութիւնները և բարեմաղթութիւնները լսելով, ինքն ևս փոխադարձ օրհնեց և շնորհաւորեց նոցա՝ պարգևելով նոյնպէս օրացոյց։

Յետոյ ներկայացան շրջակայ գիւղերից եկած պատգամաւորներ իրենց քահանաներով և գիւղապետներով և ամէնքը ևս հոգեպէս մխիթարուած մեկնեցան իրենց տեղը։ Պատարագն սկսած լինելով Նորին Սրբութիւնը չնայած իւր տկարութեան և յոգնածութեան՝ իջաւ եկեղեցի և ներկայ

եղաւ Հայրապետական և Կայսերական մաղթանքներին։ Պատարագից յետոյ ներկայացան Վաղարշապատի նորեկ պ. Գաւառապետ, քննիչ, հաշտարար քննիչ, փոշտ-հեռագրատան կառավարիչ և ուրիշ ռուս ծառայողներ։ Նոյն օր մինչև իրիկուան ժամի ժամանակ շարունակուեց Նոր տարուայ ընդունելութիւն և ապա վերջացաւ։

Յունուար 5 ին Նորին Սրբութիւնը արդէն բոլորովին կազդուրուած լինելով՝ երեկոյեան պատարագին եկեղեցի իջաւ և մինչև պատարագի վերջ մնալով՝ նախատօնակից յետոյ հանդիսով միաբանից և աշակերտաց ուղեկցութեամբ սեղանատուն գնաց և ընթրեց միաբանութեան հետ։

Յունվար 6 ին ներկայ եղաւ գիշերուայ ժամերգութեան, պատարագին և նախագահեց Ջրօրհնեաց հանդիսին։ Պատարագիչն էր Նորին Գերապատուութիւն Տ. Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեան, որ երկար տարիների ընթացքում դրսեր պաշտօնավարելով հաղիւ էր պատահեր Նորին Բ. Սրբազնութեան նոյն հրաշափառ տօնին ներկայ լինել Մայր Աթոռում։ Ջրօրհնեաց հանդէսը կատարուեց Մայր Տաճարի գաւթում Վեհարանի առաջ պատրաստուած աւազանում, որ շինել է տուել ներկայ Վեհ. Հայրապետը և որի վրայ պատրաստուած էր Յորդանանի սիւնապարդ գմբէթը։ Վեհ. Հայրապետի ներկայութիւնը նոյն հանդիսին հաւաքեր էր Մայր Տաճարի գաւթում Վաղարշապատի ամբողջ հասարակութիւն այր և կին և տեղական ռուս ծառայողները իրենց ընտանիքներով։

Նոյն օրն ևս Նորին Սրբութիւն բարեհաճեց ճաշել վանքի սեղանատանը իւր միաբանից և աշակերտաց հետ։ Ճաշի վրայ առաջին Ինքը բաժակ առաջարկեց իւր միաբանից կենացը և ցանկութիւն յայտնեց նոցա միշտ սէր, միաբան և համերաշխ տեսնել։ Վեհի կենացն առաջարկեց Գեր. Տ. Մակար սրբազան. երգում էր Ձեմարանի խումբը յարմար երգերով։

Նոյն օր ընդունելութիւն չեղաւ ի նկատի առնելով Նոր տարուայ յոգնեցուցիչ ընդունելութիւն և ութ օր յե-

տոյ Նորին Սրբութեան անուանակոչութեան առթիւ լինելիք ընդունելութիւնը։

Յունուար 13 ի կիրակի երեկոյեան ժամերգութեան ժամանակ եկեղեցին լեցուած էր Երևանից, Վաղարշապատից և շրջակայ գիւղերից եկած հոծ բազմութիւնը։ Նորին Սրբութիւն բարեհաճեց Վ.Հարանից Հրաշափառով եկեղեցի իջնել։ Հանդիսին պատշաճ շքեղութիւն տուած էր Մայր Տաճարի աւագ լուսարար Գեր. Տ. Ղևոնդ եպիսկոպոս։ Նորին Սրբութիւն Վ.Հարանի մեծ դռան առնելով շուրջառ և գաւազան՝ մտաւ ամպհովանու տակ և թափօրը շարժուեց դէպի Մայր Տաճարը զանգակահարութեամբ։ Երեկոյեան ժամերգութիւնը և նախատօնակ կատարուեց Ս. Յովհաննու Մկրտչի դասու հանդէպ յիշեալ սեղանի։ Յունուար 14 ին Նորին Սրբութիւնը դիշերուայ ժամին ներկայ եղաւ և եկեղեցում իսկ ընդունեց միաբանից և աշակերտաց ընդունելութիւն Հայրապետական գահի վրայ բազմած, Հայրապետական շուրջառաւ, Գաւազան ի ձեռին։ Պատարագին երգում էր Հ. Կոմիտասի պատրաստած քառաձայն խումբը Հ. սուրբի ղեկավարութեամբ. պատարագիչն էր Գեր. Տ. Մակար եպիսկոպոս։ Նոյն օրը Վ.Հարանում կատարուեց Հայրապետական անուանակոչութեան ընդունելութիւն բազմաթիւ այցելուների և ծառայողների։

Ճաշին Նորին Սրբութիւն իջաւ վանքի սեղանը և նախագահեց միաբանից սեղանին։

Առաջին բաժակն առաջարկեց Վ.Հ. Հայրապետի կենաց Գեր. Տ. Գէորգ Սրբազան Սուրէնեանցը, գեղեցիկ կերպով համեմատելով օրուայ տօնեցեալ սրբի և Նորին անուանակից Վ.Հ. Հայրապետի կեանքը, ցանկանալով երկար տարիներ ողջ առողջ Հայրապետական գահի վրայ բազմած տեսնել ընդհանուր ազգի ընտրեալ և սիրեցեալ Հայրիկին։ Բ. բաժակ առաջարկեց դարձեալ Վ.Հ. Հայրապետի կենաց բարձր. Տ. Աշոտ վարդապետ, բացատրելով այն դժուարութիւնները և ջանքեր որոց հաստատակամ տշխատութեամբ

յաղթելով Նորին Սրբութիւն երկար տարիներ կարողացեր էր վաստակել իրաւամբ և արդարութեամբ Հայրիկ անունը և Հայրապետական գահը։ Ապա Նորին Սրբութիւն ինքը ոտքի ելաւ և իւր յատուկ և հայրական զուարճախօսութեամբ իւր կարծիքը յայտնեց խօսած ճառերի մասին. շնորհակալութիւն յայտնեց համայն միաբանից՝ իրենց ցոյց տուած որդիական անկեղծ զգացմանց և սիրոյ համար և ինքը փոխադարձ առաջարկեց իւր միաբանից կենաց։ Միաբանք և աշակերտք միաձայն «կեցցէ մեր Հայրիկը, կեցցէ Հայոց Հայրապետը» ասելով խմեցին Նորէն իրենց Հոգևոր Պետի կենաց։

Նորին սրբութիւնը յայտնելով թէ ինքը յոգնած լինելով չի կարող երկար նստել, հրամայեց միաբանից շարունակել իրենց ճաշը և ուրախութիւնը և ինքը վերադարձաւ Վեհարան հանգստանալու։ Այնուհետև միաբանք ուրախ և գոհ, ասելով և զուարճանալով շարունակեցին իրենց ճաշը և վերջացրին։

Երեք մեծ ազգերի (Նոր տարուան, Ծննդեան և Վեհի անուանակոչութեան) առթիւ Նորին Սրբութիւնը ստացաւ բազմաթիւ շնորհաւորական հեռագրեր թէ Ռուսաստանից և թէ արտասահմաններից, թեմական առաջնորդներից, փոխանորդներից, քահանաներից, հոգաբարձութիւններից, ընկերութիւններից, իշխաններից և զանազան ազգայիններից։

Շնորհաւորողներին Նորին Սրբութիւն անձամբ ինքը պատասխաներ է, որ ընթերցող կը տեսնէ ներկայ համարի առաջին երեսումը տպած ոտանաւոր շնորհակալիքը։

Գորիւն Վարդապետ